ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 6-Հ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի, ՀՀ վարչապետի 11.06.2018թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 5-րդ, 7-րդ, 8-րդ և 25-րդ կետի 1-ին ենթակետերի

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մինչև ՀՀ ոստիկանության պետի իրավասու տեղակալի նշանակումը ՀՀ ոստիկանության պետի 2018 թվականի հուլիսի 14-ի «ՀՀ ոստիկանության գործունեության բնագավառների, գործառույթների և դրանք ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների, ոստիկանության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների գործունեության համակարգումը և Երևան քաղաքի ու մարզային վարչությունների սպասարկումը ՀՀ ոստիկանության պետի և նրա տեղակալների միջև բաշխելու, ՀՀ ոստիկանության պետի 31.05.2018թ. թիվ 1640-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 2-Լ հրամանի 1-ին հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված բնագավառներում իրականացվող աշխատանքների համակարգումը հանձնարարել ՀՀ ոստիկանության պետի խորհրդական Ա. Կիրակոսյանին:

2. ՀՀ ոստիկանության պետի խորհրդական Ա. Կիրակոսյանին՝ վերահսկել սույն հրամանի 1-ին կետում նշված բնագավառների համակարգման աշխատանքների շրջանակներում ՀՀ ոստիկանության պետի կողմից տրված հանձնարարությունների կատարումը:

3. Հրամանը հայտարարել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ **Վ. ՕՍԻՊՅԱՆ**

«28» 03 2019թ.,
ք. Երևան